ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2018/213

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24284-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02671392/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 21.12.2018թ. թիվ Ե/40/2186-18 գրության հիման վրա, 26.12.2018թ. նախաձեռնել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 21.12.2018թ. թիվ Ե/40/2186-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից պոմպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-165/18» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակից «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի 27.11.2018թ. թիվ 4 որոշմամբ ճանաչվել է ընթացակարգի ընտրված մասնակից՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով: Նույն օրը հանձնաժողովի հիշյալ որոշումը և պայմանագիր կնքելու մասին որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում: Գնման ընթացակարգի անգործության ժամկետն ավարտվել է 2018թ. դեկտեմբերի 3-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 05.12.2018թ. 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ծանուցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Սակայն, 2018թ. դեկտեմբերի 20-ի դրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին չի ներկայացրել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Գնահատող հանձնաժողովը 21.12.2018թ. արտահերթ նիստում կայացրել է որոշում «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-165/18» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչված «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին զրկել պայմանագիրը ստորագրելու իրավունքից»:

Պատվիրատուն ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. <u>«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24284-18 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/213 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24284-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 21.12.2018թ. թիվ Ե/40/2186-18 գրությունը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-165/18» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-165/18» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.11.2018թ. թիվ 2 և 27.11.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար պոմպերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-165/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովը 08.11.2018թ. կայացած նիստի N 2 արձանագրության 7-րդ կետով որոշել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղը զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

Այնուհետև, 27.11.2018թ. կայացած նիստի N 4 արձանագրության 5-րդ կետով Հանձնաժողովը որոշել է որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման

արդյունքում 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին:

05.12.2018թ. Հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով Ընկերությանն է ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկն ու պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովը 21.12.2018թ. www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում հրապարակել է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-165/18» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն, որով 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի հիմնավորմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

• 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

• 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն

ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում:

Հրավերի՝

- 8.5 կետի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:
- 8.6 կետի համաձայն՝ պայմանագիր կնքելու վերաբերյալ պատվիրատուի առաջարկը ստացած ընտրված մասնակիցը համակարգի միջոցով ընդունում կամ մերժում է իրեն ներկայացված առաջարկը:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասով:

- 05.12.2018թ. Հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով Ընկերությանն է ուղարկել պայմանագիր կնքելու առաջարկն ու պայմանագրի նախագիծը:

- 20.12.2018թ. դրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից «ՀԱԷԿ» ՓԲԸ-ին չի ներկայացրել պայմանագիրը և պայմանագրի ապահովումը:

Հաշվի առնելով, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.12.2018թ. թիվ 27/26-3/24284-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02671392/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ